ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՊՄՀ

Հիմնադրված 1922

1 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2025 թ.
№ 17 (1154)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 60-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

Պատմության արդի հիմնախնդիրների համապերեքպում

Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի Համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի, ֆակուլտետում գործող Հայաստանում և Սփյուռքում պատմության ուսուցման հիմնախնդիրների հետազոտական գիտական կենտրոնի նախաձեռնությամբ բուհում կայացավ «Պատմության դասավանդման արդի հիմնախնդիրներ» միջազգային 3-րդ գիտաժողովը:

Գիտաժողովը համալսարանի հարկի ներքո միավորել էր խնդրով հետաքրքրված գիտակրթական տարբեր կառույցների ներկայացուցիչների, պատմաբանների, դասախոսների և ուսանողների:

Գիտական կենտրոնի ղեկավար Հարություն Պապոյանը փաստեց՝ Սփյուռքը և Հայաստանը կարիք ունեն պատմության հիմնախնդիրների վերլուծման, վերարժևորման, դասավանդման մեթոդների շարունակական զարգացման:

ՀՊՄՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը մեր պատմության արդի շրջափուլում կարևորեց պատմության դասավանդման գործընթացը հասարակություն-մարդ գործընթացում՝ պատմության դասավանդման մեթոդաբանության մեջ ընդգծելով խնդիրների առկայությունը: Ինչու պետք է սովորել պատմություն հարցին նա ունի իր պատասխանը՝ կարողանալու քանդել պատմության շերտերը և այն դիտարկելու քաղաքական-հասարակական-մշակութային համատեքստում, հասկանալու պատճառահետևանքային կապերը:

Քննադատական մտածողություն, քաղաքացիական ինքնագիտակցություն, ինքնության ճանաչողության զարգացում, անցյալից ոգեշնչում և ապագայի կանխորոշում՝ ըստ Լիլիթ Մկրտչյանի այս տեսանկյունից պետք է դիտարկել պատմությունը:

Անդրադառնալով ուսուցչական կադրեր պատրաստելու բուհի առաքելությանը՝ նա հանգամանորեն խոսեց նոր չափորոշչին համապատասխան պատմության դասավանդման մոտեցումների, 21-րդ դարի կրթական նպատակների ու հմտությունների, ուսումնական ծրագրի ապագաղութացման ու բազմաշերտ աշխարհում վերադիրքավորման մասին:

Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի դեկան, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Էդգար Հովհաննիսյանը ներկայացրեց հայկական ժամանակակից սփյուռքում «Հայոց պատմություն» առարկայի ուսուցման խնդիրները:

Նա անդրադարձավ Սփյուռքում ազգային պատմության դասավանդման առանձնահատկություններին, ուսուցման նպատակներին ու խնդիրներին, մասնավորապես ուսուցչի համար նախատեսված նյութերի պակասին ու մասնա-

➤3

Աշնանային դպրոցի հայկական գույները. «Ճանաչողությունից՝ համագործակցություն, համագործակցությունից՝ նախագծեր, նախագծերից՝ վստահություն»

Մանկավարժական համալսարանում նոյեմբերի 25-ին մեկնարկեց «Ստեղծարար Հայաստան» ուսանողական տուրիզմ միջազգային դպրոցը, որին մասնակցում էր 20 ուսանող Ռուսաստանի Դաշնությունից, 20 ուսանող ՀՊՄՀ Կուլտուրայի և Գեղարվեստական կրթության ֆակուլտետից և 20 ուսանող Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանից:

Մասնակիցները նոյեմբերի 24-ից 30-ը հագեցած ծրագրով իրականացրին համատեղ մի շարք ծրագրեր:

ՀՊՄՀ աշխատակազմի և միջազգային հարցերի գծով պրոռեկտոր Անի Հակոբյանը ողջունեց ուսանողական տուրիզմի «Ստեղծարար Հայաստան» խորագրով միջազգային դպրոցի մասնակիցներին և հայաստանյան համալսարանների գործընկերներին՝ Հայաստանի ճարտարապետության և շինարարության ազգային համալսարանի, Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի, ինչպես նաև Հայաստանում «Ռոսսոտրուդնիչեստվո»-ի ներկայացուցիչներին:

Պրոռեկտորն ընդգծեց, որ Մանկավարժական համալսարանի կարևոր ուղենիշներից է միջազգային ակադեմիական համագործակցության զարգացումը, և նման նախագծերը հնարավորություն են ստեղծում տարբեր երկրների կրթական ավանդույթների ու մշակութային ինքնությունների ընդհանուր արդյունք ստեղծել՝ մասնագիտական աճի և փոխըմբռնման:

«Իմ խորին համոզմամբ, համալսարանները ոչ միայն գիտելիք տալու համար են, նրանք կոչված են համախմբելու մարդկանց, մտածողություն ձևավորելու և հորիզոններ բացելու, որը չես տեսնի ոչ մի լսարանում. ահա ինչու մշակույթը կրթության հիմքն է, ոչ թե նրա զարդարանքը»,-ասաց նա:

Պրոռեկտոր Անի Հակոբյանը հպարտությամբ նշեց՝ Հայաստանը մշակույթի, գիտության և արվեստի հնագույն քաղաքակրթություններից է, իսկ Ռուսաստանը համաշխարհային մշակույթի, գիտության ու արվեստի մեջ նշանակալի ներդրում ունեցող երկիր: Նա միաժամանակ ընդգծեց, որ համալսարանում մշակութային այդ ավանդույթները չեն մրցակցում, նրանք փոխադարձաբար ամրացնում են մեկը մյուսին, ձևավորում հարգանքի, երկխոսության և համատեղ նոր բան ստեղծելու տարածք:

Պրոռեկտորն ասաց, որ ռուսաց լեզուն իր համար մայրենի լեզուն չէ, բայց այդ լեզվով մեծերի ստեղծագործությունները բնագրով կարդալը մեծ ուժ է փոխանցում. լեզուն մտածողության ձև է և մշակութային ինքնություն:

Ուսանողական տուրիզմ միջազգային դպրոցի մասնակիցներին ՀՊՄՀ պրոռեկտորը հորդորեց՝ շաբաթվա ընթացքում փորձել խորությամբ ըմբռնել մեկը մյուսի մշակութային լեզուն, որովհետև նման փորձը ձևավորում է կապեր, որոնց վրա ստեղծվում է երկարատև համագործակցություն:

Ամփոփելով՝ Անի Հակոբյանը մաղթեց, որ շաբաթը դառնա նորի սկիզբ. ճանաչողությունից ծնվի համագործակցություն, համագործակցությունից՝ նախագծեր, իսկ նախագծերից՝ վստահություն, որը կդիմանա ոչ թե օրերի, այլ տարիների քննությանը:

Միջազգային համագործակցության և ծրագրերի կառավարման կենտրոնի ղեկավարի պարտականությունները

➤3

Համայնքը միայն հասցե չէ

Գյումրու Խրիմյան Հայրիկի անվան N 41 հիմնական դպրոցում նոյեմբերի 28-ին ամփոփվեց ԿՁՆԱԿ հիմնադրամի նախաձեռնությամբ արդեն 8-րդ անգամ անցկացվող «Իմ կյանքը համայնքում» ծրագիրը, որում ընդգրված է 27 դպրոց:

Դպրոցի տնօրեն Հայաստան Հովհաննիսյանի գլխավորությամբ և ուսուցչական կոլեկտիվի ակտիվ ջանքերով օրը վերածվել էր տոնի. տարբեր մարզերից այստեղ համախմբված աշակերտները, ուսուցիչներն ու ծնողները միավորվել էին մեկ գաղափարի շուրջ՝ համայնք, ընկերություն, նոր բարեկամներ, նոր մշակույթ:

Դպրոցի սրահում մասնակից մարզերի աշակերտները ձևավորել էին տաղավարներ՝ ցուցադրելով նախագծային աշխատանքներ՝ իրենց համայնքներին բնորոշ կերակրատեսակներով, քաղցրավենիքով, դեկորատիվ-կիրառական արվեստի ձեռագործ նմուշներով՝ գաթա-փախլավայից մինչև հայոց թագուհիներին ներկայացնող տիկնիկներ:

Լիլիթ Մկրտչյանի նախագիծը տարեցտարի ընդլայնում է համայնքների ու դպրոցների շրջանակը՝ նպատակ ունենալով զարգացնել սովորողների հայրենաճանաչությունը, ընդլայնել համայնքների կապը, ձևավորել հոգածություն համայնքի նկատմամբ, ծանոթացնել համայնքների մշակույթին, կենցաղին ու ավանդույթներին:

ՀՊՄՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը ՀՊՄՀ ուսումնական գործընթացների գծով պրոռեկտոր Նաիրա Սաֆարյանի հետ շրջեց տաղավարներում և զրուցեց տարբեր համայնքների երեխաների հետ:

«Նախագիծն սկսելուց ի վեր Շիրակի մարզի Ջրափիի միջնակարգ դպրոցը ակտիվ մասնակցություն է ցուցաբերել աշակերտների փոխանակման մեկշաբաթյա ծրագրին: Գյուղական այս միջավայրում երեխաները ծանոթանում են պատմամշակութային արժեքներին, գյուղի ավանդույթներին, կարողանում են ինտեգրվել անծանոթ ընտանիքներում, որոնց կարևորագույն ավանդույթները տանում են իրենց հետ: Ամփոփմանը սովորողները ներկայացնում են հյուրընկալած համայնքում իրականացրած նախագծերը»,- ներկայացնում է դպրոցի տնօրեն Մարիամ Հովհաննիսյանը:

Երևանից միայն Մոնթե Մելքոնյանի անվան N 11 դպրոցն էր մասնակցում ծրագրին, արդեն չորրորդ անգամ: Այս անգամ ներկայացրել էին Երևանի հայտնի հայկական ռեստորանների ամենահայտնի ուտեստները: Դպրոցի տնօրեն Գայանե Միրզոյանի կարծիքով «Իմ կյանքը համայնքում» ծրագիրը չափազանց բարի ու հրաշալի ծրագիր է, որովհետև երեխաները ձեռք են բերում նոր ընկերներ, դուրս են գալիս քաղաքի ջերմոցային կյանքից, նոր միջավայրում ծանոթանում երկրի պատմությանը:

Գյումրու N 41 հիմնական դպրոցի ուսուցչուհի Արուսյակ Գրիգորյանը վստահեցնում է՝ հետաքրքիր ծրագիր է և պետք է շարունակական լինի. «Ծրագրի հիմքում մեր ինքնության պահպանումն է, մեր արմատներին պետք է մոտ լինենք: Մեր երեխաները պետք է հասկանան, որ հաղորդակցվելը պարտադիր պայման է դպրոցահասակ երեխաների համար, որպեսզի դպրոցն ավարտելուց հետո շփման խնդիր չունենան, չկաշկանդվեն միջազգային դպրոցների ու ճամբարների մասնակցելիս»:

Ծրագրի շրջանակում իրականացվում է դպրոցների սովորողների փոխանակում, որոնք մեկ շաբաթ հյուրընկալվում են որևէ համայնքում, ապրում նոր ընտանիքներում և սովորում այլ դպրոցների իրենց հասակակիցների հետ:

Ծրագրի այս տարվա ամփոփմանը միացել էր Մանկավարժական համալսարանը: Դպրոցի դահլիճում ներկաներին երաժշտական գեղեցիկ կատարումներով ողջունեցին Կուլտուրայի ֆակուլտետի քանոնահարների «Զարթոնք» համույթի աղջիկները (ղեկավար, ՀՀ ժողովրդական արտիստ, ՀՊՄՀ պրոֆեսոր Հասմիկ Լեյլոյան) և կլառնետահարների համույթը (ղեկավար՝ ՀՊՄՀ Երաժշտության ամբիոնի դոցենտ Սևադա Շհոյան):

Քանոնահարները ներկայացրին Արամ Խաչատրյանի ստեղծագործություններից, էթնոգրաֆիկ պարերի շարան, իսկ կլառնետահարները հանդես եկան լատինա-ամերիկյան աշխույժ ստեղծագործությունների կատարումով:

Դպրոցի տնօրեն Հայաստան Հովհաննիսյանն ընդգծեց, որ ծրագրի շնորհիվ իրենց դպրոցը դարձել է բարեկամության կամուրջ՝ միատեղելով տարբեր մարզերի սովորողներին՝ իրարից այնքան տարբեր գույներով, բայց մեկ ընդհանուր սիրով հայրենիքի հանդեպ:

«Այս մեկ շաբաթվա ընթացքում սովորողները բացահայտում են ոչ միայն համայնքները, այլև միմյանց, մենք տեսնում ենք, թե որքան սեր կա աշակերտների սրտում, մանկավարժների սրտում, թե որքան ջերմություն կա ծնողների սրտում, առանց որի հնարավոր չէր լինի այս ծրագիրը կյանքի կոչել:

Այսօր ավարտում ենք ծրագիրը, բայց ոչ այն ճանապարհը, որ սկսել ենք»,-ասաց տնօրենը: Ելույթի ավարտին նա դպրոցականներին հորդորեց՝ դուք եք Հայաստանի ապագայի պատասխանատուն, շատ սիրեք մեր հայրենիքը:

ԿՁՆԱԿ հիմնադրամի տնօրեն Ժաննա Հարությունյանը փաստեց՝ սա պարզապես հերթական միջոցառում չէ, երեխաները համայնքում նոր բացահայտումներ են անում, ձեռք բերում նոր ընկերներ:

ՀՊՄՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար, «Իմ կյանքը համայնքում» նախագծի հեղինակ Լիլիթ Մկրտչյանը ողջունեց դպրոցականներին, նրանց ուսուցիչներին ու ծնողներին և շնորհակալություն հայտնեց բոլոր նրանց, ովքեր հավատացին ծրագրի հաջողությանը և գաղափարն իրականություն դարձրին:

«Մի փոքր ցանկություն և դուք վաղը կարող եք համալրել մեր համալսարանի այս պրոֆեսիոնալ համույթները,-ասաց Լիլիթ Մկրտչյանը ծրագրի մասնակից երեխաներին:- Իսկ մենք մտածենք մեր համալսարանական դպրոցներն այս նախագծում ընդգրկելու մասին»:

Նա վստահեցրեց՝ այս նախագծին մեծ ապագա է սպասվում:

Ելույթ ունեցավ Գյումրու ժողովրդական գործիքների պետական նվագախումբը՝ հայրենասիրական երգերի կատարումներով ներկայացնելով արվեստների օրրան Գյումրին:

Դպրոցի դաստիարակության գծով տնօրենի տեղակալ Արմինե Զատիկյանը բեմը տրամադրեց Արագածոտնի, Կոտայքի, Լոռու, Տավուշի, Շիրակի, Սյունիքի, Գեղարքունիքի, Արարատի, Արմավիրի, Վայոց ձորի և Երևանի համայնքները ներկայացնող դպրոցականներին, որոնք միջոցառումն ամփոփեցին բարեկամության ու ընկերության մասին խորհրդանշական երգով:

«Համայնքը միայն հասցե չէ, համայնքը այն է, ուր իրար ձեռք են մեկնում, ընկերանում, միասին կյանք տալիս նոր գաղափարների». նախաձեռնությունը բարեկամության, հայրենասիրության, հայրենաճանաչության ջերմ զգացողություններ պարգևեց՝ այն վստահ համոզմունքով, որ հայրենիքի հանդեպ սերն սկսվում է հայրենաճանաչությունից, որը դեպի ապագա տանող ճանապարհի լավագույն հանգրվանն է:

Միլվա ԱՍՐՅԱՆ

Պատմության արդի հիմնախնդիրների համապերսպեկտիվում

➢1 գիտական ցածր պատրաստվածությանը:

«Առարկայի դասավանդումը անմիջականորեն կապվում է մեկ ազգ և ընդհանուր հայրենիք ունենալու գաղափարին, նպաստում ինքնության պահպանմանն ու ինքնագիտակցության ձևավորմանը, Հայաստան-Սփյուռք կապերի ամրապնդմանը, ազգային, համամարդկային, տեղական արժեքների համադրմանը». Էդգար Հովհաննիսյանը խոսեց Սփյուռքի պատմության ուսուցիչների համար «Հայոց պատմություն» դասագրքի, մեթոդական ձեռնարկի, իսկ սովորողների համար մեդիա ռեսուրսների ստեղծման հրատապության մասին:

«Պատմության ուսուցման դերը ազգային ինքնության ձևավորման գործընթացում» թեմայով զեկուցման մեջ պրոֆեսոր Խաչատուր Ստեփանյանն անդրադարձավ ազգային ինքնության ձևավորման և ամրապնդման հարցին, որն ավելի քան արդիական է համաշխարհայնացման, տեղեկատվական պատերազմների և մշակութային սահմանների փոփոխության պայմաններում:

Պատասխանատու և հանդուրժող ազգային ինքնության ձևավորման գործում զեկուցողը կարևորեց ուսումնական ծրագրերի անընդհատ վերանայումը, սովորողների քննադատական մտածողության զարգացումը, ուսուցիչների մասնագիտական բարձր պատրաստվածությունը, պատմական փորձառության բազմազանությունը ներառող կրթական մոտեցումները:

«Աշխարհացույց» կրթական նորարարական ծրագրի ղեկավար Արևիկ Ավետիսյանը, ծրագրի փորձագետ Հայկանուշ Ղևոնդյանը և վերապատրաստող ուսուցիչ Նաիրա Երկանյանը ներկայացրին «Աշխարհացույց»-ի կիրառումը «Պատմություն» առարկայի չափորոշչով նախատեսված կրթական վերջնարդյունքների ձևավորման գործում:

Գիտաժողովը շարունակվեց մասնաճյուղերում՝ մասնագիտական քննարկումների շուրջ անդրադառնալով առարկայի դասավանդման մեթոդիկայի բազմաբովանդակ շերտերի հայեցակարգային խնդիրներին ու արդի մոտեցումներին Հայաստանում և Սփյուռքում:

Միլվա ԱՍՐՅԱՆ

Աշնանային դպրոցի հայկական գույները...

➢1 կատարող Աննա Հախումյանը ծրագրի մասնակիցներին ներկայացրեց Մանկավարժական համալսարանի առաքելությունը և ծրագրի հնարավորությունները՝ կրթական և մշակութային կապերի ստեղծման ու ամրապնդման գործում:

Պաշտոնական բացման ընթացքում առցանց ելույթ ունեցան ՌԴ գիտության և բարձրագույն կրթության նախարարության ներկայացուցիչները՝ վստահեցնելով, որ համալսարանների ուսանողների փոխշփումները կվերածվեն մշակութային երկխոսության:

Ելույթ ունեցան համալսարանների պատվիրակությունների ղեկավարները: Նրանք հույս հայտնեցին, որ միջազգային դպրոցը հնարավորություններ կընձեռի նոր համատեղ ծրագրերի իրականացման, ուսանողների և համալսարանների բարեկամության նոր կապեր կստեղծի՝ վերածվելով մշակույթների երկխոսության և փոխըմբռնման ու հաղորդակցման հրաշալի հարթակի: Ելույթները շաղախված էին ջերմությամբ ու վառ տպավորություններով՝ Հայաստանը սրտաբաց մարդկանց, հրաշալի պատմական կոթողների երկիր է, չքնաղագեղ բնության ու բարի ավանդույթների երկիր:

Այս տարի ծրագիրն ընդգրկում է ստեղծարար ոլորտներ՝ լուսանկարչություն, դիզայն, նորաձևություն, երաժշտություն ու ճարտարապետություն: Ըստ այդմ առաջին օրը ուսանողական դպրոցի մասնակիցներն այցելեցին Երևանի պատմության և Երևանի ժամանակակից արվեստների թանգարան:

Նոյեմբերի 26-ին համալսարանի Գեղարվեստական կրթության ֆակուլտետում Երիտասարդական և ուսանողական տուրիզմի ծրագրերի շնորհանդես էր: Այնուհետև ինտերակտիվ քվեստ՝ «Կովկասի ժողովուրդների պատմություն», որը ներկայացրին Հյուսիսկովկասյան դաշնային համալսարանի ներկայացուցիչները:

Գեղարվեստական կրթության ֆակուլտետում լսեցին Հռիփսիմե Մարոնյանի դասախոսությունը, հանդիպեցին արվեստի գործիչների հետ, ապա օրն ամփոփեցին երևանյան զբոսանքով:

Նոյեմբերի 27-ին Կուլտուրայի ֆակուլտետում ներկա եղան ազգային պարերի ուսուցման, ինչպես նաև լուսանկարչության վարպետաց դասերի, իրականացրին նախագծային աշխատանք, որից հետո Հայ-Սլավոնական համալսարանում անցկացվեց վարպետաց դաս՝ ««Դիլիջանը՝ ոգեշնչում. ստեղծում ենք սեփական քաղաքի արտ-կերպարը»:

Միջազգային դպրոցի մասնակիցներն այցելեցին Հայաստանի պատմական վայրեր՝ Գառնի և Գեղարդ, եղան Փարաջանովի թանգարանում:

Նոյեմբերի 28-ին ամփոփեցին նախագծային աշխատանքը, քննարկեցին շաբաթվա ծրագրերը, խոսեցին արդյունքների մասին:

Միլվա ԱՍՐՅԱՆ

Հանդիպում ռեկտորի մոտ

Նոյեմբերի 19-ին ՀՊՄՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը հանդիպում ունեցավ կրթության դոկտոր, պրոֆեսոր Եփրեմ Միհրանյանի հետ, որը դրամաշնորհային ծրագրով աշխատում է Երևանի պետական համալսարանում: Մանկավարժության ամբիոնում վարում է դասընթաց և հետազոտական աշխատանքներ է իրականացնում որպես համալսարանական խմբի անդամ:

Եփրեմ Միհրանյանը 18 տարեկանից Ամերիկայի Միացյալ նահանգներում է ապրում, աշխատել է որպես ուսուցիչ, դասախոս, տնօրեն, համալսարանում զբաղվել է կրթական խնդիրներով: 13 տարի Ջորջիա նահանգի քոլեջում է աշխատել: Տարվա կեսը Երևանում հետազոտական աշխատանքներ է իրականացնում, ապա կրկին վերադառնում է Ամերիկա:

Պրոֆեսորը Մանկավարժական համալսարանում էր՝ ծանոթանալու մանկավարժական խնդիրներին ու մարտահրավերներին, հասկանալու՝ որպես անհատ՝ որտեղ և ինչպես կարող է միանալ այդ մարտահրավերներին, դրանք հաղթահարելու նպատակով աջակցելու բուհին և համագործակցության եզրեր գտնելու:

Հանդիպմանը ներկա էր ՀՊՄՀ Ուսումնագիտական գծով պրոռեկտոր Մարիամ Իսպիրյանը:

Եփրեմ Միհրանյանը կիսեց իր մտքերը մանկավարժական բուհում արժեհամակարգի, մտածողության փոփոխության, քննությունների համեմատ դասընթացի առավելությունների ու կարևորության մասին, այնուհետև զուգահեռներ տարավ ամերիկյան և հայաստանյան կրթական համակարգերի միջև: Ըստ Եփրեմ Միհրանյանի՝ Ամերիկայում կրթությունը շատ մակերեսային է, իսկ Հայաստանում չկա կրթվելու մոտիվացիա, դրդապատճառ:

Կողմերը դասընթացներն ու ամենօրյա աշխատանքը կարևորեցին քննություններից, խոսեցին ուսումնական ծրագրերի ճկունության, կրթական համակարգի խնդիրների, ուսանողների և դասախոսների պատրաստակամության ու պատասխանատվության, կրթության որակի, այն արժևորելու և նոր մտածողություն ձևավորելու միջավայր ստեղծելու մասին:

Լիլիթ Մկրտչյանն ընդգծեց՝ ուսումնական ծրագրերը նորացման ու թարմացման կարիք ունեն: Ուրախ կլինի լսել Եփրեմ Միհրանյանի առաջարկությունները և առաջիկայում կազմակերպել նրա հանդիպումը Մանկավարժական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի հետ:

Միլվա ԱՍՐՅԱՆ

Մանկավարժական համալսարանում էր Բալինտ Կովաչը

ՀՊՄՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը հանդիպեց աշխատանքային այցով Մանկավարժական համալսարան այցելած Հունգարիայի Բուդապեշտի Պիտեր Պազմանի անվան կաթոլիկ համալսարանի Հայագիտական ամբիոնի վարիչ Բալինտ Կովաչին: Վերջինս հանգամանորեն ներկայացրեց բարձրագույն կրթական կառույցների համագործակցությունը՝ հույս հայտնելով, որ այն շարունակական բնույթ կկրի:

2016 թվականին Հունգարիայի կաթոլիկ համալսարանում հիմնադրված Հայագիտական ամբիոնը տարիներ շարունակ բացառիկ դեր է խաղում Հայաստանից դուրս հայագիտական մտքի զարգացման գործում՝ կրթություն իրականացնելով բակալավրական և մագիստրոսական կրթական ծրագրերով:

Առաջիկա համագործակցության մասին երկուստեք քննարկումներ եղան, Լիլիթ Մկրտչյանը պատրաստակամություն հայտնեց շարունակելու համագործակցությունը կրթական տարբեր ծրագրերի շուրջ, միաժամանակ խոսակցություն ծավալվեց 2026 թվականին Պիտեր Պազմանի անվան կաթոլիկ համալսարանի Հայագիտական ամբիոնի հիմնադրման 10-ամյակի հոբելյանը համատեղ ձեռնարկներով նշավորելու հարցի շուրջ:

Ստորագրվեց համագործակցության հուշագիր

Մանկավարժական համալսարանում էր Վիեննայի Բեթհովենի անվան կոնսերվատորիայի հիմնադիր-տնօրեն, Վիեննայի Բեթհովենյան կրթության, արվեստի և երաժշտության միության նախագահ, վաստակավոր պրոֆեսոր Սիրանուշ Գալոյան-Տկաչենկոն:

Մանկավարժական համալսարանի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Լիլիթ Մկրտչյանը և Սիրանուշ Գալոյան-Տկաչենկոն Կուլտուրայի ֆակուլտետի դահլիճում ստորագրեցին համագործակցության հուշագիր, որով համագործակցության հիմք դրվեց Հայկական պետական մանկավարժական համալսարանի և Վիեննայի Բեթհովենի անվան կոնսերվատորիայի միջև. կիրականացվեն բազմաթիվ գիտակրթական ու մշակութային ծրագրեր, կկատարվեն դասախոս-ուսանող փոխայցելություններ, համատեղ համերգներ:

Հյուրին դիմավորեցին ֆակուլտետի փողային նվագախմբի խրոխտ հնչյուններով (ղեկավար՝ Կոլյա Մարտիրոսյան), իսկ հուշագրի ստորագրումն ուղեկցվեց համերգային փոքրիկ ծրագրով. ելույթ ունեցան ՀՊՄՀ Երաժշտության ամբիոնի «Զարթոնք» քանոնահարների (ղեկավար՝ Հասմիկ Լեյլոյան) և Ազգային նվագարանների (ղեկավար՝ Նորայր Դավթյան) նվագախմբերը՝ ուսանողների խմբավարությամբ:

Լիլիթ Մկրտչյանը կարևորեց միջոցառումը և առանձնահատուկ շնորհակալություն հայտնեց նախաձեռնության «մեղավորին»՝ ընդգծելով Արա Գևորգյանի դերը նման կարևոր համագործակցությունը նախաձեռնելու գործում, այնուհետև շնորհակալություն հայտնեց Սիրանուշ Գալոյան-Տկաչենկոյին՝ հայրենիքից դուրս ազգային, մշակութային, հայապահպան գործունեություն ծավալելու համար. «Այդ փորձառությունը մեզ համար շատ կարևոր է, և մենք էլ փորձի փոխանակման կարիք ունենք: Աշխարհի զարգացման միտումները թարմ ուժ կհաղորդեն մեզ և, մեկտեղելով ավանդականն ու ժամանակակիցը, առաջ կգնանք»:

Հյուրը շնորհակալություն հայտնեց ջերմ ընդունելության համար՝ խոստանալով համագործակցությունը ամրացնել համատեղ ծրագրերի իրականացմամբ: Տոնական օրվա հրաշալի նախաձեռնության համար նա շնորհակալություն հայտնեց ամբիոնի վարիչ, ճանաչված երաժիշտ Արա Գևորգյանին՝ նրան հանձնելով շնորհակալագիր:

«Արա Գևորգյանն էլ մեզ մոտ կլինի ձեր դեսպանը, որի միջոցով մեծ նախագծեր կիրականացնենք»,-ասաց կոնսերվատորիայի տնօրենը:

Վիեննայի Բեթհովենի անվան կոնսերվատորիայի հիմնադիր-տնօրեն Սիրանուշ Գալոյան-Տկաչենկոն շեշտեց՝ համագործակցությունը չափազանց կարևոր է նաև իր համար. տաղանդավոր ուսանողներ շատ ունեն և առաջիկայում նախատեսում են բացել նաև շվիի, դուդուկի, քանոնի բաժիններ:

Հանդիպման ավարտին կողմերը հուշանվերներ փոխանակեցին՝ ակնկալելով հաջորդ անգամ հանդիպել Վիեննայում: Սիրանուշ Գալոյան-Տկաչենկոն ուրախությամբ ընդունեց ձեռքի աշխատանքով արված ազգային զարդանախշերով խորհրդանշական նվերը, որն իր պատվավոր տեղը կգբաղեցնի կոնսերվատորիայի պատին՝ իբրև գեղեցիկ հուշ Հայաստանից:

Միլվա ԱՍՐՅԱՆ

Անդրադարձան հայ-հունգարական գործընկերությանը

ՀՊՄՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը նոյեմբերի 26-ին Մանկավարժական համալսարանում հյուրընկալել էր Հունգարիայի դեսպանատան Առաքելության ղեկավարի տեղակալ Ալեքսանդրա Չիզմադիային: Բուհի ղեկավար կազմի հետ հանդիպման ընթացքում կողմերը քննարկեցին գիտակրթական ոլորտի մի շարք հարցեր հայ-հունգարական համագործակցության շրջանակում:

Մանկավարժական համալսարանում գործող Հունգարական կենտրոնն արդեն իսկ երկու երկրների կրթամշակութային կապերի միջև յուրահատուկ կամուրջ է՝ գիտակրթական ժառանգության փոխանակման կարևոր հարթակ, որը ծառայեցվում է երկկողմ հարաբերությունների ամրապնդմանը, նոր նախաձեռնությունների ու տարաբնույթ ձեռնարկների իրականացմանը:

Ալեքսանդրա Չիզմադիան լիահույս է՝ կենտրոնը կրթամշակութային երկխոսության կարևոր հարթակ է, վստահեցնում է, որ կենտրոնի միջոցով առավել դյուրին կլինի ստեղծել լեզվի ուսուցման ու մշակութային ժառանգության ներկայացման հնարավորություններ:

Նա սիրով ներկայացրեց իր երկիրը՝ տուրիզմի գրավչություն, նոր բացված էթնոգրաֆիական թանգարան ու համերգասրահ, երկիր, որտեղ նրբորեն համադրվում են պատմականն ու ժամանակակիցը, բնությունն ու ճարտարապետությունը:

Ռեկտորի պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը մասնագիտությամբ պատմաբան է, լավ գիտի Հունգարիայի պատմությունը, նաև ծանոթ է Հունգարիայում հայկական սփյուռքին, ինչպես նաև հայ-հունգարական դարավոր կապերին:

Լիլիթ Մկրտչյանը գործընկերության լայն հնարավորություններ է տեսնում գիտակրթական ոլորտի տարբեր ասպարեզներում՝ փոխանակման ծրագրեր, համատեղ գիտաժողովներ, միաժամանակ կարելի է ակտիվացնել սփյուռքի փոքր համայնքի մեծ ներուժի հետ կապերը:

Հունգարական կենտրոնի ղեկավար Դանիել Գադզիկն ընդգծեց, որ կենտրոնը ոչ միայն լեզվի ուսուցման խնդիր է լուծում, այլև գիտական-մշակութային կենտրոն է, որի միջոցով հայ ուսանողները ծանոթանում են Հունգարիայի պատմությանը, որտեղ մեծ թվով հայեր գործունեություն են ծավալել, և դրանով նաև առերեսվում իրենց պատմությանը: Ոչ մեծ, բայց արժեքավոր հայ համայնքը մեծ դեր է ունեցել Հունգարիայի պատմության, տնտեսության և մշակույթի զարգացման մեջ, և հայ ուսանողները Հունգարիայում կրթվելով՝ միաժամանակ կնպաստեն հայ-հունգարական կապերի զարգացմանը:

Այնուհետև Դանիել Գադզիկը Հունգարական կենտրոնում անցկացրեց տեղեկատվական հանդիպում, որի ընթացքում հայ ուսանողներին հանգամանորեն ծանոթացրեց հունգարական կառավարության կրթաթոշակներին և նրանց ընձեռած հնարավորություններին:

Հայկական հեկրքերը Իսպանիայում

Մանկավարժական համալսարանի ավագ դպրոց-վարժարանի հյուրն այս անգամ Արարատ Ղուկասյանն էր, որն ապրում է Իսպանիայում և որտեղ 2004 թվականին հիմնել է հայկական կիրակնօրյա դպրոց: Սկսելով 2 աշակերտից՝ երկու ամսվա մեջ դպրոցի հաճախողների թիվը հասել է չորս տասնյակի: «Արարատ» հայկական կիրակնօրյա դպրոցի հիմնադրումով՝ նա նպաստում է հայապահպանության գործին՝ իրականացնելով տարբեր կրթամշակութային, սոցիալ-քաղաքական միջոցառումներ:

Օրվա հյուրը մասնագիտությամբ պատմաբան էր: Նա պատմեց Իսպանիայում հայ համայնքի մասին, որը գոյացել է 1990-ականների

արտագաղթի հետևանքով: Աշխատելով Վալենսիայում՝ փորձում են տարածքով փոքր, բայց քաղաքակրթության բնօրրան հանդիսացող Հայաստանի տեղը ամրագրել իսպանացիների հոգում ու մտքում:

Իսպանիայի 17 մարզից 6 մարզում և 33 քաղաքում ճանաչել են Հայոց ցեղասպանությունը, իսկ իրականում շատ դժվար է Իսպանիայի ապակենտրոն թագավորությունում ծավալել հայապահպան գործունեություն: Այնուամենայնիվ ստեղծել են «Հայրենիք» շաբաթաթերթ, ունեն ռադիո, որով հայկական լուրեր ու մշակութային հաղորդումներ են թողարկում, որովհետև մեր ազգը ձուլվելու ընդունակություն ունի, և ուծացման դեմ իրենց ամենօրյա պայքարը ոչ միայն խնդիր է, այլև նպատակ:

Իսպանիայում չկա դասական սփյուռք, բայց ապրում է 16 հազար հայ, արդեն քաղաքացիություն ձեռք բերած, և անչափ կարևոր է բոլորին միավորել հայապահպան ծրագրերի շուրջ:

«Վատ է, որ դպրոցի աշակերտները շատանում են՝ ի հաշիվ Հայաստանից արտագաղթածների, բայց լավ է, որ Իսպանիայում ծնված նոր սերնդի սովորողներով է համալրվում դպրոցը: Անցյալ տարին ռեկորդային էր՝ ունեցանք 75 աշակերտ»,-ասաց Արարատ Ղուկասյանը:

Նա ավագ դպրոցի սովորողներին պատմեց Իսպանիայում հայկական հետքի մասին՝ պատմական ժամանակներից մինչև մեր օրերը, խոսեց հայերենն անաղարտ պահելու անհրաժեշտության մասին: Բասկերի երկրում նա գտել է 200 հայերեն բառարմատ: Նա սովորողներին հորդորեց՝ հատկապես հիմա, երբ տարածքային հարևանները, պետական հովանավորությամբ, ամենուր փորձում են վերացնել հայկական հետքերը, պետք է ավելի հստակ գործել, հայ դասականների գործերը թարգմանել տարբեր լեզուներով՝ աշխարհին ներկայացնելով մեր մշակույթն ու պատմությունը:

Միջոցառմանը մասնակցում էր Հայաստանում Իսպանիայի պատվո հյուպատոսը, ՀՊՄՀ պրոռեկտոր Նաիրա Սաֆարյանը, ավագ դպրոց-վարժարանի աշակերտները և ուսուցիչները:

Միլվա ԱՍՐՅԱՆ

Գործնական քննարկում



Մանկավարժական համալսարանի ՏՏ բաժնի կողմից բուհի ղեկավարությանը ներկայացվեց ուսումնական գործընթացի ավտոմատ կառավարման համակարգի կառուցվածքն ու գործառույթները: Համակարգի ստեղծման աշխատանքներն սկսվել են դեռևս 2011 թվականից, իսկ ամբողջական տարբերակով համակարգը հասանելի է դարձել 2013 թվականից:

Բաժնի ղեկավար Դավիթ Սարգսյանը ներկայացրեց մոդուլյար համակարգի բաղադրիչները՝ ուսումնական մաս, դասախոս, ամբիոն, դեկանատ, ուսանող:

Տեղի ունեցավ գործնական քննարկում և մտքերի փոխանակում, ըստ որի՝ որոշ գործառույթներ պետք է ակտիվացնել և շարունակել այդ ուղղությամբ աշխատանքները:

Հանդիպման ավարտին որոշեցին առաջիկայում դիտարկել ավտոմատ կառավարման համակարգի նոր հնարավորությունները և արդիական լուծումներով զարգացումները՝ լրացուցիչ գործընթացների ավտոմատացման հետ կապված առաջարկություններ ներկայացնելով ոչ միայն բաժնի, այլև շահագրգիռ ստորաբաժանումների կողմից:

Շնորհավոր պարեդարձդ, վարպետ



Հայկական պետական մանկավարժական համալսարանի Հեռուստառադիոլրագրության ամբիոնի պրոֆեսոր Հակոբ Ավետիքյանի անվան հետ կապված է ոչ միայն մասնագիտական բարձր մակարդակ, դրված բարձր նշաձող, այլև բարոյականության, նվիրումի, մեծահոգության և մարդկային վեհ արժեքների մի ամբողջ դպրոց:

Նրա դասերը չեն սահմանափակվում լսարանով. դրանք շարունակվում են մեզանից յուրաքանչյուրի մեջ՝ որպես ճշմարտության հանդեպ ազնիվ վերաբերմունք, խոսքի մշակույթի պատասխանատվություն և լրագրողական էթիկային անխախտ նվիրվածություն:

Այսօր՝ Ձեր ծննդյան օրը, հարգելի Հակոբ Ավետիքյան, մենք շնորհակալություն ենք հայտնում այն գիտելիքի, սթափ մտածողության և համբերատար առաջնորդության համար, որոնցով ղեկավարել եք մեր կուրսը՝ ապագա լրագրողներին: Ձեր տված գիտելիքները մնայուն են ու կայուն:

Մաղթում ենք առողջություն, անսպառ ստեղծագործական եռանդ և նոր հաջողություններ: Թող յուրաքանչյուր ներդրում ձեր աշխատանքի մեջ վերադառնա վստահությամբ, սիրով և Ձեր անվանն ու ներդրումին համարժեք գնահատանքով:

Շնորհավոր ծնունդդ, պարոն Ավետիքյան:

Թող ձեզանով սկսված մեր ճանապարհը միշտ լուսավորվի գիտելիքի լույսով, որը Դուք եք վառել:

Միլենա ԱՐԹԵՆՅԱՆ
ՀՊՄՀ Լրագրության 4-րդ կուրսի ուսանողուհի

«Շախմատը կրթության մեջ»

Մանկավարժական համալսարանում նոյեմբերի 22-ին անցկացվեց ուսուցչական համաժողով՝ «Շախմատը կրթության մեջ». փորձառություններ, լուծումներ և զարգացման ուղիներ» խորագրով: Նախաձեռնությունը ՀՊՄՀ «Շախմատ» գիտահետազոտական ինստիտուտինն էր:

Համաժողովը նպատակ ուներ ներկայացնել և քննարկել շախմատի ուսուցմանը դպրոցներում և անդրադառնալ լավագույն փորձին:

Համաժողովի ընթացքը հագեցած էր շախմատ դասավանդող ուսուցիչների փորձի ներկայացմամբ. եղան գործնական քննարկումներ, նոր գաղափարների ու մոտեցումների պակաս չկար:

Շախմատի ուսուցիչներին համաժողովի առթիվ շնորհավորեցին ՀՊՄՀ Ուսումնագիտական գծով պրոռեկտոր Մարիամ Իսպիրյանը և կրթության փորձագետ, «Շախմատ» գիտահետազոտական ինստիտուտի մասնագետ Սերոբ Խաչատրյանը:

«Ուրախ եմ ողջունել այս շատ հետաքրքիր ու կարևոր աշխատաժողովի մասնակիցներին: Մանկավարժական համալսարանը հավատարիմ իր որդեգրած քաղաքականությանը՝ մշտապես ուշադրության կենտրոնում է պահում դպրոցը, մեր ուսուցիչներին և հնարավորինս փորձում է աջակցել նրանց իրենց ամենօրյա դժվարին ու բարդ աշխատանքում: Մենք գիտակցում ենք՝ մանկավարժի աշխատանքը որքան բարդ ու պատասխանատու, նույնքան էլ հետաքրքիր ու հաճելի է, ուրախ ենք, որ ընտրել եք մանկավարժի մասնագիտությունը և հավատարիմ մնալով ձեր կոչմանը՝ մասնակցում եք բոլոր այն գործընթացներին, որոնք կնպաստեն ձեր գիտելիքների ու կարողությունների զարգացմանը»,-ասաց պրոռեկտորը:

Մարիամ Իսպիրյանը նշեց, որ Մանկավարժական համալսարանը բազմաթիվ միջոցառումներ է իրականացնում, այդ թվում՝ նաև մի շարք վերապատրաստումներ, որի մասնակիցն են դառնում մանկավարժները: Նա գնահատանքի խոսք հղեց առցանց միացած մանկավարժներին՝ պատասխանատվության և բուհի հանդեպ տածած վստահության համար՝ հատուկ ընդգծելով «Շախմատ» գիտահետազոտական ինստիտուտի դերը՝ հանձին Սմբատ Լպուտյանի և ողջ աշխատակազմի, որոնք իրենց հետևողական աշխատանքով մշտապես շախմատի ուսուցիչների կողքին են, օգնում են և աջակցում, որպեսզի նրանց հնարավորություններն ու կարողություններն անընդհատ զարգանան, որպեսզի սիրով կատարեն իրենց աշխատանքը:

Պրոռեկտորը հույս հայտնեց, որ առաջին անգամ առցանց ձևաչափով իրականացվող համաժողովը կլինի շարունակական, և մասնակիցներից յուրաքանչյուրը գիտելիքների նոր պաշարով կշարունակի իր պատվաբեր աշխատանքը:

ՀՊՄՀ «Շախմատ» ինստիտուտի գիտաշխատող Քրիստինե Տանաջյանը փաստեց, որ համաժողովներից այս անգամ տարբերվող առցանց հանդիպումը ցույց կտա, թե ինչպես է գիտությունը քայլում պրակտիկ կիրառական դաշտում՝ փորձառության, խնդիրների և փորձառու ուսուցիչների ճանապարհին հանդիպող դժվարություններին լուծումներ տալու. «Այժմ լսելու ենք այն ուսուցիչների զեկուցումները, որոնք կամք են ունեցել իրենց փորձառությունը փոխանցել այսօր մեր ուսուցիչներին ու մասնակիցներին»:

Շախմատը վաղուց դադարել է սոսկ խաղ լինելուց, այն մտել է մեր կյանք, մեր իրականություն՝ որպես կրթության ու մտքի դպրոց՝ դառնալով ճանաչողության գործիք՝ ամփոփեց նա:

«Շախմատ» գիտահետազոտական ինստիտուտի բոլոր անդամների անունից կրթության փորձագետ Սերոբ Խաչատրյանը ողջունեց համաժողովի մասնակիցներին և շնորհակալություն հայտնեց մասնակցության համար: Նա ընդգծեց՝ վերջին շրջանում տարբեր ձևաչափերով ուսուցչական համաժողովները դառնում են ավանդույթ, և «Շախմատ» գիտահետազոտական ինստիտուտը շատ կարևորում է այնպիսի միջոցառումների անցկացումը, որ գլխավոր անձինք ուսուցիչներն են:

«Կարծեք թե անցել են այն ժամանակները, երբ մեր ուսուցիչներին պետք է սովորեցնենք դասավանդման մեթոդներ ու հնարներ: Որովհետև այդ ամենի ուղղությամբ նախորդ տարիներին զգալի աշխատանքներ են տարվել, տպագրվել են բազմաթիվ ձեռնարկներ, ի վերջո, առցանց տիրույթում ամեն ինչ հասանելի է, և մենք կարծում ենք՝ այս փուլում կարևոր է այդ ամենը դնել կիրառության մեջ, մշակել օրինակելի դասեր, ուսումնական գործունեության ձևեր և անցկացնել փորձի փոխանակումներ, որը, ես կարծում եմ, այսօր սովորելու լավագույն ձևն է, երբ ուսուցիչներն իրենց պրպտումների հիման վրա ստեղծում են լավագույն փորձ, լավագույն դասեր՝ այդ ամենը ներկայացնելով իրենց գործընկերների ուշադրությանը: Վստահ ենք, որ այս ամենը ունենալու է վարակիչ ազդեցություն, այսօր զեկուցումներ ներկայացնող 10 ուսուցիչները բոլորի համար կլինեն շարժիչ ուժ, ոգևորողներ, որպեսզի հաջորդիվ ուսուցիչների մեկ այլ խումբ հանդես գա իր լավագույն փորձի ներկայացմամբ»:

Սերոբ Խաչատրյանը կարևորեց օրվա ձևաչափը՝ երբ ուսուցիչներն են իրարից սովորում, շատ արդյունավետ է, որովհետև նրանք ամեն օր մտնում են դասարան, ամեն օր տեսնում և զգում են աշակերտներին և իրենց մտորումները, փորձառությունը, կատարած հետազոտական աշխատանքները, վստահ են, հոգեհարազատ են իրենց գործընկերների համար:

«Մեր նպատակներից մեկն է շախմատի գիտականացումը, շախմատի սոցիալականացումը, և այս հարթակը հիանալի հնարավորություն է իրարից սովորելու»,-ամփոփեց բանախոսը:

Ուսուցչական առցանց համաժողովն ընթացավ 3 ուղղություններով՝ Թվային գործիքներ և ժամանակակից տեխնոլոգիաներ, Շախմատի ուսուցման արդյունավետ մեթոդներ, Շախմատի ինտեգրված դասերի հաջողված օրինակներ:

Առցանց հանդիպումն ընթացավ հարց ու պատասխանով, որն ամփոփեցին հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վլադիմիր Կարապետյանը և հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Վահան Սարգսյանը:

Հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, «Շախմատ» գիտահետազոտական ինստիտուտի ավագ գիտաշխատող Վլադիմիր Կարապետյանը կարևորեց շախմատի ուսուցիչների առցանց գիտաժողովը, որը լայն ընդգրկում ուներ: Նա ընդգծեց ներկայացված թեմաների արդիականությունը. ուսուցիչները հիմնականում անդրադարձան ոչ միայն շախմատի դասավանդման հարցերին, նաև միջառարկայական կապերին, տեխնոլոգիաներին և կիրառված մեթոդներին: «Զեկուցումները շատ հետաքրքիր էին, մանավանդ, որ մեզ հաջողվել էր ուսուցիչների աշխատանքը համակարգել մեր մենթորների միջոցով, որը երկարատև աշխատանք է եղել: Սա մեծ հաջողություն էր՝ ակտիվացնել ուսուցիչներին, այն դեպքում, երբ դպրոցում այդ առարկան դասավանդվում է 2-4-րդ դասարաններում շաբաթը մեկ անգամ»:

Վ. Կարապետյանն ընդգծեց՝ այսօրվա տեսանկյունով է վերակառուցում կատարվում՝ շախմատը դիտում են որպես կրթական մի գործիք, որը նպաստում է մարդու զարգացմանը, մտածողությանը, որը փոխներգործուն մեթոդների օգնությամբ ցույց է տալիս նրա ընդլայնման հնարավորությունները՝ կիրառումը այլ առարկաների դասավանդման գործընթացում:

Ինստիտուտի ծրագրերի համակարգող Վահան Սարգսյանն էլ կարևորեց փոխներգործուն մեթոդների ակտիվացումը՝ նկատի ունենալով, որ շախմատային մտածողությունը իրական հնարավորություններ է բացում մյուս առարկաների դասավանդման որակի բարձրացման համար:

«Մեզ հաջողվել է ուսուցիչներին մոտիվացնել դեպի ուսումնական գործընթացների որակի ապահովումը կրթական ծրագրերում, ինչպես նաև ունենալ սեփական հետազոտությունները»,-ասաց հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Վահան Սարգսյանը:

«Շախմատը կրթության մեջ որպես ընդհանուր զարգացման ռեսուրս» խորագրով ՀՊՄՀ «Շախմատ» գիտահետազոտական ինստիտուտի այս ուսումնական տարվա ծրագրային թեման ընդլայնվում է կիրառական հարթակներում՝ հանրապետության շախմատի ուսուցիչներին կապելով առարկայի որակի բարձրացման նորօրյա մեխանիզմներին:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

ՀԻՇԵԼՈՒ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ

ՍՈՒՐԵՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ – 95

«Սուրեն Մուրադյանը բացահայտեց իրական աշխարհի հեքիաթն ու մանկության մոլորակի գաղտնիքները»

ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐԸ ՉԵՆ ԾԵՐԱՆՈՒՄ

Տաղանդավոր մանկագիր, բանաստեղծ, երգիծաբան, ՀՊՄՀ-ի 1952թ. շրջանավարտ Սուրեն Մուրադյանը տասնամյակների ընթացքում ստեղծեց մի ողջ գրադարան՝ ստեղծագործեց մանուկների և մեծերի համար:

Ակամայից մտաբերում ես նրա բանաստեղծական տողերը «Անձնագրով ինձ մի չափեք, տարիքս դա չէ ստույգ, // Անձնագրով դուք կխաբվեք, հոգով մանուկ եմ, մանուկ»: Սուրեն Մուրադյանն ինքն էլ բացում է փակագծերը. «Իմ ջահելության գաղտնիքը իմ անչար հոգին է, իմ բարությունը, աշխարհին ու մարդկանց ազնիվ ու ջինջ աչքերով նայելու հատկանիշը»:

Սկսած իր գրական մուտքից՝ «Առաջին երգ» ժողովածուից, և դրան հաջորդող 100-ի սահմանագիծը վաղուց հատած «Երկնքից երեք խնձոր ընկավ», «Իմ այգին»,«Բարության ծառը», «Մրգաքաղ», «Բանաստեղծները չեն ծերանում», «Աշնանամուտի զանգեր», «Սիրո տաղարան», «Մեկ մանկիկ եմ, մեկ պապիկ եմ», «Ես սիրում եմ քեզ, հայրենիք» մանկական, քնարական, երգիծական ժողովածուներում տեղ գտած հրաշալի բանաստեղծություններով, հեքիաթներով, պոեմներով, հանելուկներով, իր տեքստերով՝ տարբեր սերնդի կոմպոզիտորների կողմից գրված 250-ից ավելի երգերով, աշխարհի տասնյակ լեզուներով թարգմանված գրողը՝ բացեց իր արահետը հայ գրականության մեջ:

Ստեղծագործական իր երկար ճանապահին նրան մշտապես ուղեկցում էին համալսարանական տարիները, հաճախ էր վերհիշում, ակնածանքով խոսում իր սիրելի դասախոսական աստղաբույլի մասին. Արարատ Ղարիբյան, Առաքել Առաքելյան, Աշոտ Աբրահամյան, Արամ Ղանալանյան, Նորայր Դաբաղյան, Վաչե Պարտիզունի, Արշալույս Բաբայան... Նրանց խորհուրդներն ու կյանքի դասերը կանթեղի նման վառվել են նրա ճանապարհին: Համալսարանի կամարների տակ են ձևավորվել ու թևավորվել նրա գրական առաջին քայլերն ու հաջողությունները: Իր ուսանողական տարիներին նա բուհում գործող գրական խմբակի անդամներից էր, «Գրական սերունդ» պատի թերթի ակտիվ նախաձեռնողներից:

Ուսանողական տարիների հետ կապված մի անմոռաց դեպք դրոշմվել էր նրա հիշողության մեջ: Գրաբարի դաս էր: Ներս մտավ անվանի լեզվաբան Աշոտ Աբրահամյանը և ասաց. «Այսօր Մուրադյան Սուրենի համար հիշարժան է: Կարդացեք «Գրական թերթը»: Եթե նա արժանացել է Դ.Դեմիրճյանի գնահատականին՝ հպարտանալու իրավունք ունի» (1951 թ. 25 դեկտեմբերի, «Նոր ծիլեր»): Դասամիջոցին ամբողջ լսարանը ողողվեց «Գրական թերթով»:

Չխամրող հուշերի շղթայում նա առանձնացնում էր մի թանկ հանդիպում: Բուհի բանասիրական ֆակուլտետի՝ ավարտական կուրսի ուսանողության հետ նախատեսված էր հանդիպում՝ Ավետիք Իսահակյանի հետ: Ուսանողության կողմից ելույթի հնարավորությունը վստահված էր շրջանավարտ Մուրադյանին: Նա իր խոսքն ավարտեց վարպետին նվիրված մի բանաստեղծությամբ, որն ընթերցելու ընթացքում լսվում էր Իսահակյանի սրտաբուխ արձագանքը:

Տարիներ անց, իր ապրած կյանքի ընթացքում, նա բախտ ունեցավ հանդիպել, մոտիկից ճանաչել, վայելել հայ և այլազգի մեծերի բարեկամությունը, որոնց մասին հուշերն ամփոփվեցին «Մեծերն իմ կյանքում» ժողովածուում (Իսահակյան, Դեմիրճյան, Զորյան, Դաշտենց, Սահյան, Շիրազ, Կապուտիկյան, Մեժելայտիս, Միխալկով, Զվյագինցևա և ուրիշներ):

Սուրեն Մուրադյանը մի առանձին ջերմությամբ էր կապված իր համալսարանին, մասնակցում էր տարբեր ֆակուլտետներում կազմակերպված հանդիսություններին, պատասխանում ուսանողներին հետաքրքրող հարցերին, ընթերցում իր ստեղծագործությունները:

ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐԸ ՉԵՆ ԾԵՐԱՆՈՒՄ

Բանաստեղծները չեն ծերանում,
Նրանք ապրում են ամենուրեք,
Մեկ ծնվող մանկան հետ մանկանում,
Մեկ սիրող շրթին դառնում սիրերգ:
Նրանք ապրում են ամպրոպի մեջ,
Վաղորդյան ցողում, մթնշաղում,
Մեկ հայտնվում են հրում անշեջ,
Մեկ ծիածանի մեջ ծիծաղում:
Մեկ դառնում են ցավ ու տառապանք,
Մեկ վայելք, խինդի վճիտ աղբյուր,
Դառնում են դարի խոր հառաչանք,
Մեկ հավատի սյուն, պայքարի սուր:
Նրանք վառվում են որպես կերոն,
Մոլորվածներին ափ են հանում,
Հանգչում են մեկեն ու երգելով...
Բանաստեղծները չեն ծերանում:

ՏԱՐԻՆԵՐ

Տարիներ, ու՞ր եք սլանում,
Մի քիչ կամաց գնացեք,
Ձեր հետևից ես չեմ հասնում,
Բեռս ծանր է, իմացեք:
Արագավազ ձիեր թամբած՝
Դուք թռչում եք քառատրոփ,
Ես ուղտի պես բեռնավորված՝
Ինչպե՞ս հասնեմ ձեզ արդյոք:
Հեռո՜ւ հեռվում լեռ կա հույսի՝
Պիտի ելնեմ ես կատար,
Իմ սրտի մեջ ծովեր լույսի՝
Բյուր երազներ անկատար:
Ինչպե՞ս անցնեմ ես անտարբեր,
Մի կին ձեռքով է անում,
Օգնություն է հայցում մի ծեր
Կյանքի անծայր օվկիանում:
Թափորի մոտ պիտի մի պահ
Գլխարկ հանեմ հարգանքով,
Հարսանիքին ճանապարհ տամ
Պատանեկան հրճվանքով:
Տարիներ, ու՞ր եք սլանում,
Մի քիչ կամաց գնացեք,
Ձեր հետևից ես չեմ հասնում,
Բեռս ծանր է, իմացեք:

Սուրեն Մուրադյանը մանուկների կողմից ամենից շատ սիրված բանաստեղծն է: Նա ապրեց ինը տասնամյակ, բայց այդ տարիքում էլ առույգ էր ու լավատես: 2025 թվականի նոյեմբերի 26-ին բանաստեղծը կդառնար 95 տարեկան: Նա ապրում է մանուկների հոգիներում, նրա բանաստեղծությունները ջերմությամբ ու անկեղծ սիրով են պարուրում ընթերցողի հոգին ու միտքը:

Թերևս չի սխալվել Համո Սահյանը, երբ գրել է. «Սուրեն Մուրադյանը 7-ից 70 տարեկան ընթերցողների տաղանդավոր բանաստեղծն է»:

Իսկ Գևորգ Էմինը իրավացիորեն նկատել է՝ նրա հասակակիցները բոլորը փոխվում են, մեծանում, նույնիսկ ծերանում, իսկ նա միշտ Սուրենն է մնում, նույն ժպտադեմ պատանին:

Իսկ ինքը՝ բանաստեղծը գրել է. «Եթե ինձ հարցնեին՝ ո՞րն է մանկական գրողի կոչման առանձնահատկությունը, կասեի՝ զարմանալու հատկությունը: Մարդը պետք է բոլոր տարիքներում չկորցնի զարմանակլու, սիրելու արժանիքը. այլապես նա կդառնա անտարբեր ու չի կարող մանկան նման մաքուր, զարմացած, գեղեցիկ աչքերով նայել կյանքին, մարդկանց»:

Սուրեն Մուրադյան՝ Մանկավարժականի անվանի շրջանավարտներից մեկը, ում կյանքի պատմությունը կապված է ոչ միայն հարազատ բուհի, այլև բազմահազար ընթերցողների մեծ սիրո հետ:

Աշակերտի ձայնը հանուն ապահով և անվտանգ դպրոցի

«Իմ ձայնը՝ հանուն ապահով և անվտանգ դպրոցի» աշակերտական համաժողովը դարձավ իրական երկխոսության հարթակ՝ աշակերտների, ուսուցիչների, ուսանողների և ծնողների միջև: Աշխատարաններից երկուսը «Ես ապահով եմ, երբ ուսուցիչը հասկանում է, իսկ ծնողը՝ լսում» և «Ես և թվային աշխարհը. իրավունքներ, վտանգներ և ընտրություն» խորագրերով էին, որոնց մասնակից աշակերտները ցույց տվեցին, որ դպրոցականները ցանկանում են ոչ միայն խոսել իրենց խնդիրների մասին, այլև առաջարկել լուծումներ:

Առաջին խորագրով քննարկման ընթացքում աշակերտները շեշտեցին, որ դպրոցական անվտանգության հիմքը ոչ միայն կանոններն ու ֆիզիկական միջավայրն են, այլ հենց հարաբերությունները: Նրանց խոսքով՝ երբ

ուսուցիչը փորձում է հասկանալ աշակերտի զգացմունքները, իսկ ծնողը՝ իսկապես լսել, ապա ստեղծվում է վստահելի մթնոլորտ, որտեղ երեխան զգում է իրեն պաշտպանված և կարևոր:

Մենք կարևորեցինք, որ երեխաները ամենաշատը կարիք ունեն փոխըմբռնման, համբերության ու աջակցող ներկայության, քանի որ այս տարիքը զգայուն ու բռնկուն փուլ է: Քննարկման ավարտին առաջարկվեց, որ աշակերտները ավելի ակտիվ ներգրավվեն աշակերտական խորհուրդների աշխատանքներում, որպեսզի իրենց խնդիրներն ու առաջարկները ներկայացվեն նաև դպրոցական կառավարման մակարդակում:

Երկրորդ խորագրով աշխատարանում աշակերտները խոսեցին թվային իրավունքների, անձնական տվյալների պաշտպանության, կեղծ էջերի, խաղային կախվածության և սոցիալական ցանցերում հոգեբանական ճնշման մասին: Նշվեց նաև բիոհիրավունքի հարցը՝ ընդգծելով, որ անձի կենսաբանական կամ մարմնական տվյալները ևս ենթակա են պաշտպանման թվային դարաշրջանում:

Աշակերտները հանդես եկան կարևոր առաջարկով՝ ստեղծել ընդհանրական արագ արձագանքման համակարգ, որտեղ հնարավոր կլինի տեղադրել տարբեր առցանց զեղծարարությունների մասին տեղեկություններ, որպեսզի դրանք ժամանակին ուսումնասիրվեն և չտարածվեն:

Ընդգծվեց նաև, որ թվային աշխարհում ամենակարևոր հմտությունը ճիշտ ընտրություն կատարելու կարողությունն է՝ ընտրել անվտանգ շփումներ, վստահելի աղբյուրներ և պահպանել անձնական սահմանները:

Մեր՝ մոդերատորների գնահատմամբ համաժողովը ցույց տվեց, որ երեխաները շատ ավելի գիտակից են, քան հաճախ ենթադրվում է: Նրանք պատրաստ են պատասխանատու, մտածված քննարկումների, առաջարկում են իրատեսական լուծումներ և պահանջում, որ իրենց ձայնը լսվի: Եվ հենց այդ լսելի դառնալուն էլ ծառայում են նման միջոցառումները:

Համաժողովի եզրափակիչ ուղերձը հետևյալն էր. ապահով և անվտանգ դպրոցը ստեղծվում է համատեղ՝ աշակերտի, ուսուցչի և ծնողի համագործակցված ջանքերով, ինչպես իրական, այնպես էլ թվային աշխարհում:

Արուս ԱՅՎԱԶՅԱՆ
Սկզբնական կրթության ֆակուլտետի մագիստրոս
Ֆելիքս ԲԱԽՉԻՆՅԱՆ
Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի մագիստրոս

Թողած ժառանգության հետքերով

ՌԴ-ում ՀՀ դեսպանությանը կից Մոսկվայի «Վերածնունդ» հայկական կիրակնօրյա դպրոցն իր հին ու նոր սաների առջև բացեց դռները՝ մեկնարկելով XXXVIII (2025-2026 թթ.) ուսումնական տարին:

Ավանդույթի համաձայն դպրոցում ընթացիկ դասերին զուգահեռ տեղի են ունենում ճանաչողական բաց դասեր, որոնց նպատակն է ներկայացնել հայ ժողովրդի ծագումը, պատմության դրվագները և ծանոթացնել հայ մշակութային գանձարանի մեծերին:

Թեմատիկ դասերի շարքը մեկնարկվեց հայ ժողովրդի առասպելներով՝ Հայկից մինչև Արա Գեղեցիկ և Վահագնի ծնունդ: Շարքն ամփոփեցին «Սասնա ծռեր» էպոսով. դպրոցի ավագ դասարանի սաները քննարկեցին Սասունցի Դավթի, Մեծ Միհրի և Փոքր Միհրի կերպարները՝ ընդգծելով, որ նրանք արտահայտում են հայ ժողովրդի բնավորության տարբեր գծերը, մարմնավորում նրա ինքնությունն ու վարքագիծը: Առանձին անդրադարձ եղավ «Սասունցի Դավիթ» հայտնի արձանի ստեղծման, տեղադրման պատմությանը (քանդակագործ Երվանդ Քոչար, 1959 թ.):

Թարգմանչաց տոնին նվիրված դասին խոսվեց Մեսրոպ Մաշտոցի և նրա աշակերտների՝ Կորյուն, Եզնիկ Կողբացի, Եղիշե, Ղազար Փարպեցի և այլոց թողած ժառանգության մասին, և, իհարկե, անդրադարձ եղավ քերթողահայր Մովսես Խորենացու «Հայոց Պատմություն» աշխատությանը:

Պատմելով մեր նախնիների մասին, բնականաբար, միշտ ակնարկ է արվում, թե ինչ հետք են թողել հայերը Մոսկվա քաղաքում: Բնականաբար, խոսվում է Լազարյանների տոհմի մասին: Այս տարի նշվում է այդ տոհմի ականառու ներկայացուցիչ, մեծ բարերար Հովհաննես Լազարյանի 290-ամյակը, ում ջանքերով հարյուրավոր հայ երեխաներ ստացել են փայլուն և բազմակողմանի կրթություն: Դա իրականացվել է հենց Լազարյանների նախկին կալվածատնում, որը հիմնադրվել է 1815 թվականին, ուր այժմ գտնվում է Հայաստանի Հանրապետության դեսպանությունը: Ի դեպ նշենք, որ ՌԴ-ում ՀՀ դեսպանությունը գտնվում է իր երկրի անունը կրող փողոցի վրա՝ Հայկական նրբանցք, 2: Սա բացառիկ երևույթ է:

Խոսելով Մոսկվայում հայերի թողած հետքի մասին՝ անպայման շեշտում ենք նաև Ռուսական բանակի թատրոնը, որը համարվում է Եվրոպայում ամենամեծ բեմ ունեցողը: Այն նման է հինգքնյան աստղի, և ճարտարապետն է մեր հայրենակից Կարո Հալաբյանը: Վերջինիս անունով Մոսկվայում անվանակոչվել է երկու փողոց և քաղաքի կենտրոնում տեղադրվել է նրա արձանը:

«Առողջ մարմնում՝ առողջ հոգի» կարգախոսի շրջանակներում դպրոց այցելեց հայազգի պրոֆեսոր Իրինա Կուզմինան, որն ազգային դեսպանն է Համաշխարհային ատամնաբուժական ֆեդերացիայում: Նա կրտսեր դպրոցականներին ներկայացրեց՝ ինչպես ճիշտ խնամել ատամները, ծանոթացրեց մանուկների համար նախատեսված իր գրքերին, որոնց հայերեն տարբերակի շնորհանդեսն եղավ դպրոցի պատերի ներքո:

Այսպիսով, հայապահպան գործունեությունը, որի գլխավոր բաղադրիչներն են գիրն ու խոսքը, շարունակվում է: Շարունակվում է նոր ձևով, նոր թեմաներով, հետաքրքիր հյուրերով:

Ի դեպ, «Հայկական հետքը Մոսկվայում» խորագրով դասերի շարքը լինելու է շարունակական:

Կարծր է հիմքը, երբ կա տառը, բառը, խոսքը:

ՌԴ-ում ՀՀ դեսպանությանը կից Մոսկվայի «Վերածնունդ» հայկական կիրակնօրյա դպրոց

ՄԱՄՆԱԿՑԵՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻՆ

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Վաչե Պարտիզունու անվան հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ, «Սփյուռք» գիտաուսումնական կենտրոնի գիտական աշխատող Քնարիկ Աբրահամյանը նոյեմբերի 20-21-ը Ռումինիայի Կոնստանցա քաղաքի Օվիդիուս համալսարանում մասնակցել է բուլղարական «Տրանսպոնտիկա» ասոցիացիայի և այլ հաստատությունների համագործակցությամբ կազմակերպված «Սև ծովն իբրև գրական և մշակութային տարածք. ավերակներ և տեղաշարժեր» խորագրով միջազգային գիտաժողովին: Նա հանդես է եկել «Սև ծով. աշխարհագրական տարածքն իբրև գրական տեքստի ստեղծող հայ գրականության մեջ» զեկուցումով: Գիտաժողովի մասնակիցներին հնարավորություն է տրվել ծանոթանալու քաղաքի պատմամշակութային վայրերին, այդ թվում և՝ հայկական հետքին, ինչպես նաև այցելել Հիստրիայի ավերակները:

Նշենք, որ գիտաժողովին մասնակցում էին ներկայացուցիչներ Վրաստանից, Բուլղարիայից, Ֆրանսիայից, Չեխիայից և այլ երկրներից:

Աշակերտներն այցելեցին Մանկավարժական

«Նվիրյալ ուսուցիչների շնորհիվ է հնարավոր կառուցել ուժեղ և կայուն ապագա: Կարևոր է կրթվել, լինել նպատակասլաց, ջանալ լինել լավագույնն ապագա մասնագիտության ոլորտում,- Սերո Խանզադյանի անվան N 184 ավագ դպրոցի և Գարիկ Ներսեսյանի անվան թիվ N 135 հիմնական դպրոցի աշակերտների հետ հանդիպմանը նշեց ՀՊՄՀ Ուսումնական գործընթացների հարցերով պրոռեկտոր Նաիրա Սաֆարյանը և ավելացրեց,- եթե յուրաքանչյուր երիտասարդ առաջնորդվի այդ սկզբունքով, ապա մենք կկերտենք լուսավոր և առաջադեմ ապագա»:

Աշակերտները բուհում հյուրընկալվել էին Ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ:

Ուսանողական խորհրդի նախագահ Պարույր Գալստյանը աշակերտների հետ խոսեց մասնագիտության ճիշտ ընտրության կարևորության մասին, ընդգծեց հնարավոր ռիսկերն ու պատասխանատվությունը գիտակցելու անհրաժեշտությունը, առանձնացրեց գիտելիքի, նախաձեռնողականության և ինքնաճանաչման դերը:

Նա նկատեց՝ ժամանակակից աշխարհում հաջողության հասնելու համար անհրաժեշտ է լինել ճկուն, բաց նորարարությունների համար, մշտապես ներդրում կատարել ինքնակրթության մեջ:

Աշակերտները ծանոթացան նաև բուհում գործող ֆակուլտետներին, մասնագիտություններին, գործող միջազգային ծրագրերին, ինչպես նաև Ուսանողական խորհրդի գործունեությանը:

Աշակերտների մասնակցությամբ անցկացվեց ինտերակտիվ խաղ-թրեյնինգ, որի ընթացքում նրանք վերլուծեցին իրենց ընտրած մասնագիտությունները, քննարկեցին ապագայի մասնագիտությունների պահանջարկը և ոլորտում հնարավոր փոփոխությունները:

Այցն ամփոփեց ՀՊՄՀ թանգարան այցելությամբ. աշակերտները ծանոթացան բուհի պատմությանն ու ժառանգությանը:

Մարին ԱՂԵԿՅԱՆ

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է:
Հղումը պարտադիր է:
Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝
www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝
Սիլվա ԱՍՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
Էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ